ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

15 նոյեմբերի 2016 թվականի N 173-Ա

Ա. ՏԱՍԱԼՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը, ինչպես նաև *2016 թվականի նոյեմբերի 3-ի N 01/21.2/4343-16 գրավոր ծանուցումը*՝ **կարգադրում եմ.**

1. ***Արեքնազ Խաչիկի Տասալյանին*** 2016 թվականի նոյեմբերի 15-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Գետարգելի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2011 թվականի նոյեմբերի 15-ին կնքված N 29 աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի կամ առաջարկված թեկնածուի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Գետարգելի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել ***Արեքնազ Խաչիկի Տասալյանին***:

3. Առաջարկել դպրոցի խորհրդին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Գետարգելի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի նոյեմբերի 15
ք. Հրազդան